

հետաքրքրական, թէև զուտ պատահական, նմանություն կայ:

Սորենացին դադարեցնում է իր պատմությունը Ն. դարի կեսին, այն ժամանակ երբ Արշակունեաց ազգային հարստության վերջ գտնելովը (429ին) Հայաստան կորցրել էր իր քաղաքական անկախությունը. երկրի մեծագույն մասը Պարսից գերիշխանության տակ էր լինելը, որոնք մարդպաններ էին դնում Հայաստանի նախկին արքայական դահլի վրայ, թէև երկիրն իսկապես հայ նախարարների մէջ էր բաժնուած: Երկիրը կառավարողներն իսկապես, Բագրատունիներն, Սիւնիներն, Մամիկոնեաններն, Արծրունիներն, Սորխոսունիներն եւ այլն էին: Գրի դիւտից եւ Ա. թարգմանիչների շրջանից յետոյ Հայաստանում ոչ մի միջնադարական երեւոյթ չկար, ոչ կրօնապէս, եւ ոչ զուտ ազգային կամ քաղաքական տեսակէտով: Եւ Սորենացին, որ պարծենում էր թէ Հայը «հանուրց հիւսիսականաց վեհագոյնն» է, գրելը չի կարողանում յառաջ տանել իր երկրի ներքին պառակտումներն եւ արտուր տեսարանները նկարագրելու համար եւ սկսում է «ողբալ»: «Ողբամ դեզ Հայոց Աշխարհ» Գլուխով է վերջացնում իր ձեռնարկը:

Նոյնպէս է վարուել նաեւ Փիրզուսին: Նա եւս իր պատմութիւնն ու քնարերգութիւնը դադարեցրել է երբ Պարսկաստան կորցնում է իր քաղաքական անկախութիւնը (Ն. դարի կեսին), երբ հայրենիքն ինկած է օտար յեղի, եւ օտար իշխանների տիրապետութեան տակ, երբ հայրենի կրօնը բռնի կերպով հալածուած եւ մեկուսացուած է եւ երբ նոյն իսկ գիրն ու գրականութիւնը տեղի են տուած կրօնական ազդեցութեան եւ արարականի փոխուած: Նա այլ եւս իր «գիւհկաններին» չի լսում. գովաբանելու, պանծացնելու որ եւ է երեւոյթ չկար:

Սորենացու նման նա էլ չի կարողանում իր գրելը յառաջ տանել եւ իր հսկայական ձեռնարկութիւնը նոյնպէս ողբով է վերջացնում: Նրա այս ողբն անձնակաւն է: Ֆիրզուսին դառնապէս դանդաղուած է թէ 35 տարի անընդհատ աշխատելուց յետոյ նա արտուր վիճակի մէջ է գտնուում: Ուրիշներն օգտուած են նրա աշխատանքից ձրիօրէն. իսկ ինքը նեղութեան մէջ է: Ահա նրա վերջին խօսքերը.

«Վաթսուն եւ հինգ տարի անցան իմ գլխից. հոգիս տխուր է եւ անձկալից: Որ-

չափ աւելի եռանդով որոնում էի մեր թագաւորների պատմութիւնն, այնչափ իմ ասողութիւնացնում էր իր ընթացքը: Ծառեր, որոնք մեծ են իրենց գիտութեամբն եւ ծննդովը, որոնք իրենց համբաւն իմ գրքիս եւ պարտական, գալիս, արտագրում են իմ գրածները ձրիարար, կարծես ես նրանց վարձկան պաշտօնեան լինիմ»:

(Շարունակելի:) ՍԱՐՈՒՒՍՆ



ԱՐԵՏԻՍ ԿԵԹՈՂԻԿՈՍ ԷՋՄԻՍՏՆԵՑԻ 1594—1623

1. Առաքել Դաւրիթեցի թէև զիտէ թէ Մեղիսեղեկ կաթողիկոսի օրով էջմիածնի աթոռին վրայ երեք եւ չորս կաթողիկոսներ դոյութիւն ունէին, այս ինքն Դաւրիթ, Մեղիսեղեկ, Աւետիս եւ Սրապիոն, բայց՝ դրամամբ կամ ոչ, յայտնի չէ, եւ ոչ անդամ մը յանուանէ կը յիշատակէ զԱւետիս:

Ա. Ա. Ալպոյսաճեան¹ յեցած Գրիգոր Դարանազցոյ ժամանակագրութեան եւ Հ. Գ. Գալսեմբարեան² նոյն ժամանակագրի եւ ուրիշ ժամանակակից յիշատակարաններու վրայ առաջուցուցին թէ Դաւրիթ կաթողիկոս, որ չէր վստահեր իւր տկար ոյժերուն վրայ չիտի ժամանակի մը մէջ կառավարել անձամբ Հայոց Եկեղեցին, ընտրած էր իրեն աթոռակից բայց Մեղիսեղեկէն նաեւ Աւետիսը: Որչափ ալ պարզուած կարելի է նկատել հարցի իւր էական գծերը մէջ, բայց տակաւին Աւետիս կաթողիկոսի ինքնութիւնը եւ անոր գործունէութեան սահմանը ճշգրտած կարելի չէ համարել ընդարձակ առմամբ: Ինձ թոյլ պիտի տամ միւսանդամ անդրադառնալ Աւետիս կաթողիկոսի անձնաւորութեան եւ այս առթիւ մի համարել ինձ մտաչելի պատմական նիւթերը, ծանօթ եւ անծանօթ, յուսալով թէ անոնք պիտի նպաստեն ժէ. դարու առաջին քաւորի Հայ Եկեղեցոյ անցքերը աւելի լուսով լուսաւորելու:

2. Աւետիս կաթողիկոս պատմական բե-

¹ Բիւզանդիոն, 1907, Թ. 3285 եւ 3424: ² Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տան կաթողիկոսներու: Վիեննա 1915, էջ 44—49: Հմմտ. եւ Ազաւնուհի, Միաբանք, էջ 41:

մին վրայ առաջին անգամ երեւան կու գայ 1601ին ինքնազիր յիշատակարանով մը: Այս թուին անիկա Կ. Պոլիս կը գտնուէր. հոս Ս. Սարգիս Եկեղեցոյ հովանւոյն տակ կ'օրինակէ Ներսէս Շնորհաւոյ Ընդհանրականը: Կը ներկայացնէմ այս տեղ Չեռագրիս յիշատակարանը³, յսպումամբ անկարեւոր տողերու.

«Կատարուին է Ընթանուրակիս (Ընդհանրականիս):

Գրեցաւ ի թվականիս Հայոց ՌԾ. ի քաղաքն Կոստանդնուպոլիս, ընդ հովանեաւ սուրբ Սարգրէին. ի քահանաութիւն սուրբ Սարգիսի տէր Նիկողոսոսին, տէր Ալէքսանին, տէր Սարգիսին որ է նորընծայ. բազում աշխատանք ունին վերա գրոցս: Արդ... յիշեցէք... Աւետիս կաթողիկոս էջմիածնեցի, որ անուամբս եմ եւ ոչ գործովս. որ բազում վախաբանաւք եւ աշխատութեամբ գրեցի գիրքս, խամայրի եւ նաւոր: Ով որ յիշէ զմեզ, յիշեալ լիցի ինքն ի Քրիստոսէ. ամէն: (Բոլորգիր) Արդ գրեցաւ սոյ ի հալալ արդեանց իմոց եւ ի արդարեան վաստակոց յիշատակ ինձ Աւետիս կաթողիկոսին եւ ծնաւդաց իմոց հաւրս Միրզին եւ մաւրս Գաւարին եւ եղբաւրս Կիրակոսին. Սհակին որ մանուկ հասակաւ առ Քրիստոս փոխեցաւ եւ քեւերցս Եղիսարեթին, Շաղվարդին եւ եղբաւրորդին իմ նորարողը թարխանին»:

3. Թէ ինչ հանգամանքով կամ նպատակաւ եկած էր Աւետիս կաթողիկոս Կ. Պոլիս, յայտնի չէ ժամանակակից յիշատակարաններէն: Ժամանակի հանգամանքները երկու են. թաղութիւն թոյլ կու տան. կամ էջմիածին, Մեղիսեղեկի վերադարձն ետքը, աւելորդ նկատուած է երկրորդ աթոռակցի մը դոյութիւնը, եւ այս պատճառաւ խորհուրդ տրուած է Աւետիսին՝ երթալ Կ. Պոլիս եւ պատրիարքական աթոռին տէր ըլլալ, եւ կամ, որ աւելի հաւանական կ'երեւայ, հարկ տեսնուած է էջմիածնի պարտքերը վճարելու համար նոր հանգանակութիւն մ'ընել եւ այս նպատակաւ Աւետիս Կ. Պոլիս ուղարկուած: Դրութիւնը ճշգրիտ ըմբռնելու համար յառաջ կը բերեմ հոս Մեղիսեղեկի Կ. Պոլիս ուղեւորութեան եւ վերադարձի պարագաները, օգտուելով միակ աղբեր՝ Չամչեանի տողերէն.

Մեղիսեղեկ կաթողիկոս նեղուած պարտատէրներէն «եւ յԱրարատեան աշխարհէ եւ

զնաց ի Կ. Պոլիս. դուցէ մարթացի ժողովել անտի դրամս: Ընկալաւ զնա սիրով ժողովուրդ քաղաքին եւ մեծամեծք Հայոց, եւ պաշտեցին զամիսս քանի մի. եւ ջանային հրաժարեցանել զնա ի կաթողիկոսութենէ, զի բարձրէ երկոյութիւն կաթողիկոսաց. ամին իրի յորժամ հանին զՏիրատուր պատրիարդ յաթոսոյ, եղին ի տեղի նորա զսա ինքն զՄեղիսէթ: Այլ մինչէ եւ էր նորա կացեալ յայնմ իշխանութեան ամ մի, ընկեցին զնա ի պատրիարդութենէ, եւ եղին ի տեղի նորա զՅովհաննէս երրորդ. որում յաջորդեաց Գրիգոր Կեսարացի: Իսկ Մեղիսէթ ելեալ զնաց անդրէն յէջմիածին, եւ մասնեցաւ ի ձեռս պարտատեարց. եւ սպա վախուցեալ ի ձեռաց նոցա՝ զնաց եւ եղիւ գրաւիթ կաթողիկոս. եւ եկաց ընդ նմա ի թաքստի. եւ երկուքին եւս ըմբռնեալ ի տարակուսի՝ հեծէին անգաղար ի ձեռաց պարտատեարց» (Չամչեան, Գ., 535): Չամչեանի անձանօթ է Աւետիսի անձնաւորութիւնը, այս պատճառաւ ալ անոր յիշատակութիւնը չէ բրած:

Մեղիսեղեկի ուղեւորութիւնն ի Կ. Պոլիս եւ պատրիարքական աթոռը նստելը Չամչեան կը զնէ 1599 եւ 1600 տարիներու մէջ: Յայտնի է ժամանակակից յիշատակարանէ մը, թէ 1600ին Կ. Պոլիս էր Մեղիսեղեկ. Ղազար Եպիսկոպոս կ'օրինակէ Սաղմոսարան մը «թվին ՌԽԹ. ի մայրաքաղաք Ըստամբուլ, ի թաղաւորութեան սուլթան Մուրատի՝ որդւոյն սուլթան Մահմատի. ի պատրիարդութեան տէր Մեղիսէթ կաթողիկոսի, ընդ հովանեաւ սրբոյն Գէորդայ (գօրավարի) որ Սուլումանաստիւր ասի» (Սարգիսեան, Յուլյակ, Միսիթ. Մատենադարանի ի Վենետիկ, Ա., 312):

Ուստի Աւետիս Կ. Պոլիս մեկնած է Մեղիսեղեկի Երեւան հասնելէն անմիջապէս ետքը: Թէ որչափ ժամանակ դեղերեցաւ անիկա Կ. Պոլիս կամ ինչ յաջողութեամբ ետ դարձաւ, չգիտենք:

3. Աւետիս 1603ին էջմիածին կը գտնուէր, այս տարւոյն պատահած է իրեն Երեւան Գրիգոր Դարանազցի, որ այսպէս կ'արձանագրէ իւր ժամանակագրութեան մէջ. «Էին երեք կաթողիկոս ի վերայ մին աթոռոյն. որ էր յոյժ անկարգութիւն. անուն առաջնոյն Դաւիթ եւ երկրորդին՝ Մեղիսեղ եւ երրորդին՝ Աւետիս: Սա (Աւետիս) պարկեշտազոյն էր եւ բան վարդապետութեան ունէր ի վերայ նոցա (այսինքն՝ Դաւիթի եւ Մեղիսեղի). բայց

³ Չեռ. էջմ., 503, թղ. 171 ա:

հրամանն անիմատու եւ զազանարարոյ Մեղիսեղին էր. ոչ օրինօք եւ կանոնովք առաքելադիր, այլ կաշառօք եւ բռնութեամբ այլազգեացն յախտակելով ի Դաւթէն» (52):

Աւետիս էջմիածին-Երեւան կը գտնուէր նաեւ 1604էն ետքը: Օր մը, երբ Ամիրզումայ խան կը շրջագայէր Երեւան, բերդի կողմերը, «էր անդ առ Սանն եւ Աւետիս կաթողիկոսն եւ երկու եպիսկոպոս ընդ նմա»: Հոս կը պատահի Սանին Մեխլու անուն խաբերայ արեղան. Սանի հրամանով կը բռնուի եւ աւազան կը նետուի: Կաթողիկոսի բարեխօսութեամբ միայն կ'ազատի խեղդամահ ըլլալէ. բայց կ'աքսորուի⁴:

1607ին Յովհաննէս սարկաւազ «ի դուռն Ս. Ստեփանոս Նախավկային» ձեռագիր մը կը կազմէ, զոր ապա Տէր Մկրտիչ կը գնէ «Փաջի վանքին» համար «ի հայրապետութեան տեան Աւետիս կաթողիկոսին եւ պատրիարկ Վաղարշապատու, ի թագաւորութեան Վրացու պարոն Լաւարսափին»⁵:

5. Աւետիս կաթողիկոս երկրորդ անգամ Պարսկական սահմանէն դուրս կու գայ 1613ին: Հրաւիրուած էր Երուսաղէմ ձեռնադրելու զԳրիգոր Գանձակեցի Երուսաղէմի եպիսկոպոս եւ պատրիարկ: Ձեռնադրութիւնը տեղի կ'ունենայ Ապրիլ 5ին: Աւետիս կաթողիկոսի ձեռնադրութեան առթիւ գրած Կոնդակին պատճենն ըստ էական մասին ունիմ ձեռքիս տակ. զոր յառաջ կը բերեմ⁶:

ԿՈՆԴԱԿ ՏԵՐ ԱՒԵՏԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Նամակ ողջունի եւ պարգեւաց սիրոյ եւ խաղաղութեան, քրիստոսաւանդ եւ առաքելական ի փառաւոր երջանիկ զխտապետէ տէր Աւետիս կաթողիկոսէ ամենայն < Հայոց > եւ պատրիարկէ Վաղարշապատու սուրբ Աթոռոյն էջմիածնայ, տեղապահ եւ յաջորդ աթոռակալ եւ փոխանորդ սրբոց առաքելոցն թաղէսի եւ Բարզղղիմէսի եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, զոր եւ գրեմ ի սուրբ եւ ի փառաւորեալ աստուածազարդ եւ մեծապայծառ, յերկնահանգէտ եւ լուսածաւալ, յաստուածակոխ սուրբ քաղաքէս յԵրուսաղէմայ:...

Եւ ընդ աւրհնութեանս զխտութիւն լիցի

⁴ Չարսիս Սարկաւազ, Ա., էջ 50—53:
⁵ Յ. Թօփչեան, Յուլիանի ձեռագրաց Դարեան Ստեփանի վարդապետի, Ա. (Վաղարշապատ 1899), էջ 52:
⁶ Ձեռագիր Կարմիր վանուց Գաղատիոյ Թ. 54, թղ. 136ա—157ա ըստ ցուցակազրութեան Աղան Վ. Համամճեանի:

ձեղ ամենեցուն, սիրելի եւ հոգեւոր որդիք մեր ի Տէր. ես տէր Աւետիս կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարկ Վաղարշապատու սուրբ Աթոռոյն էջմիածնայ, ի թվին Հայոց ՌԿԲ. եկի ի սուրբ քաղաքս յԵրուսաղէմ, կամաւք եւ ընտրութեամբ աստ ժողովեալ վարդապետաց, եպիսկոպոսաց եւ քահանայից եւ ժողովրդոց, մեծի եւ փոքու, եկաց եւ բնակաց: Ձեռնադրեցի աւրհնութեամբ, մեծաւ հանդիսիւ եւ զերպայծառ տաւնախմբութեամբ զտէր Գրիգոր հայրապետն արքեպիսկոպոս սուրբ քաղաքիս յԵրուսաղէմայ, ի սուրբ առաքելական յԱթոռս Եղբաւր Տեառն արդարոյն Յակոբայ որդւոյն Չեբեթիայ, եղբաւրն Յովհաննու աւետարանչին, աւզնակա՛նութեամբ եւ ձեռնտուութեամբ տէր Դաւիթ արքեպիսկոպոսին սուրբ Աթոռոյս Երուսաղէմայ: Կամաւք եւ վկայութեամբ բազմահոյլ վարդապետացն, եպիսկոպոսաց եւ քահանայից եւ ժողովրդոց. Չուղայոյ Մեսրոպ եպիսկոպոսի, խոջայ Ռսկանին, խոջայ Մարութին, խոջայ Բարաքին, խոջայ Մարտիրոսին, խոջայ Բարաքին, խոջայ Կարապետին, խոջայ Մարութիանին, խոջայ յԵսայուն, խոջայ Մարգարին, Մկրտիչ Երիցին, Պետրոս Երիցին եւ Մարտիրոս վարդապետին, խոջայ Խրիզատին, Բաղդասարին, Վարդանիսին Վանայ քաղաքին վկայութիւնովն. Կարապետ վարդապետի Բաղիշոյ առաջնորդին, մահգասի Աւաք(ի)ն եւ իւրեանց զաւրլաթաւորաց վաքիւութեանովն. Արզրուճայ խոջայ Անդրէասին վկայութեանովն, Խարբերդցի Յովհաննէսին վկայութեանովն. Երզնկայու Փերիխանին վկայութեանովն. Համթեցի վարդապետ Ստեփանոս երիցուն եւ երեսփոխանաց եւ այլ զօրլաթալորաց վկայութեանովն. Հալապ խոջայ Պետրոսի մաւր Վարդիսաթունին վկայութեանովն. Չնքուչցի Մարտիրոս վարդապետին վկայութեանովն. Կոբցի Կիրակոս վարդապետին, Կարապետ եպիսկոպոսի վկայութեամբն. Գողթան գաւառէն եւ Աւետիս արհիեպիսկոպոսի եւ Ղուկաս եպիսկոպոսին վկայութեամբն. Յովհաննէս եպիսկոպոսին, Ղուկաս եպիսկոպոսին, Կիրակոս Երիցին, Երուսաղէմայ եղբայր Դաւիթ եպիսկոպոսի վկայութեամբն. Մովսէս վարդապետին Տաթեւացւոյն եւ այլ ամենայն ուխտականաց, եկաց եւ բնակաց հինգհարիւր ժողովրդոց:

Սոցին ամենեցուն ընտրութեամբ եւ վկայութեամբ ի յամսեանն Ապրիլի հինգն, աւուր երկուշաբթի աւազ Չատիկի, չնորհեցի

կրկին եւ վերստին զիւր սեփական աթոռն եւ վիճակ եւ բաժին ի ձեռս դորայ. եւ զվերակացութիւնս տնօրինականացս Գրիստոսի յԱստուծոյ մերոյ՝ զսուրբ Ծնունդն, զսուրբ Յարութիւնն եւ այլն, եւ զայլ ամենայն սուրբ Տնօրինականաց եւ Եկեղեցեաց իշխանութիւն ի ձեռն սորին լիցի: Եղաք հաստատութեամբ զմեր հոգեւոր որդիս զտէր Գրիգոր արքեպիսկոպոսն ի սուրբ յԱթոռս գրաւորական նամակաւ եւ բարձրագոյն իշխանութեամբս մեր, լիւնել ձեղ այցելու եւ հոգեւոր առաջնորդ՝ խրատել եւ ուսուցանել զձեղ ի տուէ եւ ի զիւրի զնալ յաւրէն եւ ի պատուիրանս Տեառն անարատութեամբ, տալով զանձն իւր աւրինակ բարեաց ձեղ ամենեցուն. ինքն արասցէ եւ զձեղ ուսուցցէ սրբութեամբ եւ արդարութեամբ, խոնարհութեամբ եւ երկիւղիւ, սիրով առ Աստուած եւ առ ընկերս իւր...:

Երուսաղէմի պատրիարքին արքեպիսկոպոսական իրաւասութիւնը գծելէն ետքը կը գրէ.

... Որով եւ զուք ամենեքեան, հոգեւոր որդիք մեր ի Գրիստոս, զարժանապատուեալ արքեպիսկոպոսդ ձեր զտէր Գրիգոր զարհիւկան գլուխդ ձեր յոյժ սիրով եւ մեծաւ գորովով ընկալարուք իբրեւ զհրեշտակ Աստուծոյ եւ առաքեալ Գրիստոսի եւ ամենայն հոգեւորական խրատու դորա, որ է շահ եւ աւզուտ հոգւոց ձերոց, հնազանդութեամբ ունկնդիր լերուք:

Այլ եւ ամենայն հաս եւ իրաւունք, զոր պարտիք տալ Աստուծոյ սուրբ Աթոռոյս՝ զհաս տանց քահանայից եւ ամենայն ընտանեաց նոցա. զերպիսայրիս կալոց եւ հնձանաց, զտեսանական մատաղին եւ զսրբանուէր մատաղին, զիրաւունս մատաղաց եւ զկենդանեաց մատաղին. զխաչ աւրհնելին եւ զքառասնից եւ զամենայն ինչ եւ իցէ՝ զանկարծամահից, զկանամբի, զտղի եւ զարեան մատաղի, տերունի կենաց եւ մահու լիով անթերի տուք ի ձեռս տէր Գրիգոր արքեպիսկոպոսիդ, զուարթ եւ առատ սրտիւ. որպէս զի զտուրս զուարթ սիրէ Աստուած:

Եւ մի ոք իցէ եւ իշխեսցէ հակառակիլ սմա կամ զիմադարձիլ, կամ բարձր հրամանիս մերոյ եւ արգելցէ զիրաւանց տալոյ, կամ խորեացէ կամ այլազգիք անկանիցի եւ յոյժ հասուցանէ տէր Գրիգոր արքեպիսկոպոսիդ: ...

Շնորհեցաք եւ ի ձեռն տէր Գրիգոր արքեպիսկոպոսիդ, ձեղ պարզեալ հոգեւորական՝ զեւզն օծութեան զսրբալոյս եւ զաստուածագործակ սուրբ Մեռոնն ի լուսաւորութիւն նո-

րածնելոցն յաւազանաւն: Չնոյն եւ զճակատ նշան հաստատութեան յաւճումն քահանայութեան եւ ի նորոգութիւն սուրբ Եկեղեցւոյ Գրիստոսի Աստուծոյ մերոյ:

Դարձեալ ծանիք, հոգեւոր որդիք մեր ի Տէր, զի ըստ առաքելական կանոնաց եւ ըստ հայրապետաց սահմանադրութեանց, ըստ առաջին հարցն սրբոց, զորձ է Արքեպիսկոպոսին ձեռնադրել զմեարապոլիտս եւ օրհնել զձէթ կնքոյն. եւ այս ոչ հակառակութեան եւ կամ անհնազանդութեան աղապաւ, այլ ըստ եկեղեցական աւանդութեանց, ըստ նախնեացն շաւղաց: Մեք դայն իշխանութիւն եւ զհրամանն տուաք տէր Գրիգոր արքեպիսկոպոսին սուրբ Երուսաղէմայ: Յայսմ հետէ իւր կամքն եղիցի զաննելն եւ զչառնելն:

Գրեցաւ զիրս աւրհնութեան բարձր հրամանիս մերոյ յըստ ի մեղ մարդեղութեան Բանին Աստուծոյ ՌԶԺԾ. ամին եւ ի սրբոյն Գրիգորէ ՌՅԺԲ. եւ ի մեծ թվականիս Հայոց ՌԿԲ. ամին: Եւ վասն առաւել հաստատութեան ձեռնադրեցաք մերով սովորական կարմիր ձեռնադրովն:

6. Այս զէպղին ծանօթ է նաեւ Գարանաւիցի, որ կը գրէ (էջ 285), Մեղիսեղեկի մահը յիշելով.

«Եւ Աւետիսն, որ էր ընկեր սոցին, նա թէպէտ որ էր անկարգութեամբ եւ հակառակ կաթողիկոս, բայց պարկեշտ էր եւ սրբասէր եւ ունէր բան վարդապետութեան, խրատիչ եւ ուսուցող, որ ամենայն վարդապետք եւ խմաստունք յեպիսկոպոսաց, ի քահանայից եւ ի ժողովրդոցն զնա պատուով ունէին քան զերկոսին, որ անհամբ էին որպէս զաղք անպիտանք, որպէս ասաց Տէրն յաւետարանին, որ կոխանք էին եղեալ յամենայն մարդկանէ եւ անպիտանացեալք յոյժ: Այլ սա վասն պարկեշտութեանն փառաւոր էր յաչս ամենեցուն: Եւ զսա տարեալ խոճաներն ամենեցուն միաբանութեամբն ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ եւ օրհնել ետուն զԳրիգոր եպիսկոպոսն, որ եօթն ութն տարի արեղայ գոլով՝ առաջնորդութիւն առնէր սրբոյն Յակոբայ մեծահոգեակ վանացն Հայոց: Եւ յետ այնորիկ զնաց յետ էջմիածինն եւ անտի ի Վրաց տունն եւ անդ եղեւ վախճաննորա, որ էր թվին ՌԿԹ (1620):

Եւ զարձեալ (էջ 328). «Եւ ի միւս ամին, որ թվին ՌԿԻին էր, զարձեալ ժողովեցան ամենայն երկրէ տօլլաթաւորքն եւ Չուղայեցիքն եւ առին զԱւետիս կաթողիկոսն ընդ իւրեանս բազում վարդապետօք, եւ գնացին

յերուսաղէմ եւ օրհնեցին (գրեթէ Պարոն-տէրն) Լալիսկոպոս» :

Կ'ըսուի նաեւ «Պատմութիւն եւ վարք Պարոնտէրի» գրութեան մէջ⁷ . «Եւ յորժամ տեսին ազգս Հայոց զհաւատարիմ ծառայու-թիւն նորա, որ վասն սուրբ Երուսաղէմայ, ապա ի ՌԿԲ թուին հարկ ի վերայ եղին եւ կո-չեցին զառաքինի Աւետիս կաթողիկոսն սուրբ էջմիածնայ, եւ բազում վարդապետք ընդ նմա եւ ետուն զնա ձեռնադրել եւ օրհնել արքեպիս-կոպոս սուրբ Երուսաղէմայ» :

Աւետիս կաթողիկոսի Երուսաղէմ գլու-նուած միջոցին իրեն պատահած էր հոն Մով-սէս վարդապետ, որ յետոյ կաթողիկոսացաւ : Իւր առ Գրեթոր Կեսարացի գրած թղթին մէջ (19 Սեպտ. 1615) ակնարկուածին մ'ընելով այս մասին կը գրէր . «Այժմ Դաւիթն ալ գնա-ցեալ է ի Սպահան եւ Աւետիսն կայ ի էջմիա-ծին եւ ասվիս զգեցեալ, ի մեզ սիրելութեան թուղթ է առաքեալ . որ մեր յերուսաղէմայ գալն փոքր ի շատէ աստուածավարութիւն տեսաք ի նմա : Բայց Ասլանէ լսեցաք թէ ի հրամանոց կողմանէ թուղթ է եղեր առաքեր ի Կ. Պոլիս», այսինքն առ Գրեթոր Կեսարացի ի Կ. Պոլիս թուղթ գրած է :

Երբ կը վերադառնար Աւետիս էջմիա-ծին, ճանապարհին (յԱմիւլ) կ'իջնայ իր ձեռքը Մելքիսեդեկ կաթողիկոսի առ Ուրբանոս Ը . գրած թղթին տպագիր մէկ օրինակը, զոր Հոռոմ տպագրած էին . «Այս գրոյս մէկն ի Հա-միթ է եկեր . եւ զնորա մէկ օրինակն Աւետիս կաթողիկոսն է տարեր ի հետն . եւ զմի օրի-նակն Համթեցիքս մեզ էին յղրկել» կը գրէ Գրեթոր Կեսարացի առ Մելքիսեդեկ մեղա-դրական նամակին մէջ⁸ :

6. Աւետիս կաթողիկոսէն ունինք ինքնա-գիր յիշատակարան մ'ալ էջմիածնի Թ. 427 Գանձարանին մէջ : Գանձարանը գրուած է ձեռամբ «Յովհաննէս իրեցի» ՌԿԶ (1617) թուին «ի հայրապետութեանն տեսն տէր Աւետիս կաթողիկոսին եւ վաղարչապատ սուրբ էջմիածնին . եւ ի թագաւորութեանն Բագրատ Իմիրզին, որ բազում տեղիք էառ եւ տիրեաց զերկիր . եւ արար խաղաղութիւն ոչ սակաւ . բայց հարկայպահանջութիւն բուռն եւ ծանր էր ի վերայ քրիստոնէից» : Այս ձե-ռագիրը նորոգել կու տայ Աւետիս կաթողիկոս

⁷ Չեռ. Ս. Յակոբեանց Մատենադարանի Թ. 322, էջ 71—72. հմտ. Գալէմբեարեան՝ Կենսագրութիւն-ներ երկու հայ պատրիարքներու եւն : Վիեննա 1915, էջ 48. Աղաւնուհի, Միւրաւնք, էջ 41 :
⁸ Թորոս Աղբար, Բ. , 288 :

եւ հետեւեալ արձանագրութիւնը իր անուան յիշատակ կը թողու . «Ես տէր Աւետիս կաթո-ղիկոս այս Գանձարանս զնեցի հալալ ար-դեանց իմոց . եւ նորոգել ավի յիշատակ ինձ եւ ծնաւդաց իմոց՝ Միրզին եւ մաւրն Գաւար Սուլթանին . եւ եղբաւրն իմ Կիրակոսին եւ որդոյն տէր Թումանին . եւ եղաք ի դուռն սուրբ էջմիածնայ» :

Վերջին անգամ կը յիշուի Աւետիս կաթո-ղիկոս 1622ին : Գրեթոր Գարանաղցի իւր Աս-տուածաշունչի օրինակութիւնը կ'աւարտէ «ի մեծ թուականիս Հայոց Ռ. եւ Հ. եւ Ա. , Նոյեմբեր ամսոյ է . եւ Քաղոց Թ. Թամուզ Ը . եւ գրեցաւ ի հայրապետութիւն Հայոց տեսն տէր Աւետիսին, որ այժմ յաջորդէ զաթոռ Ս. Գրեթորի Լուսաւորչէն մերոյ»⁹ :

Հիմնուած այս տողերու վրայ Գարա-նաղցույ վերը յառաջ բերուած տեղիքը՝ «եւ անտի (էջմիածնայ գնաց) ի Վրաց տունն եւ անդ եղեւ վախճան նորա, որ էր թվին ՌԿԹ» (1620) պէտք է այնպէս հասկնալ թէ Աւետիք 1620ին անցաւ Վրաստան եւ հոն վախճանե-ցաւ 1623էն ետքը :

7. Նիւթերու այս համադրութենէն կը տեսնուի, թէ Աւետիս կաթողիկոս ընդ էջ-միածնեցի էր, որդի Միրզայի եւ Գոհար-Սուլթանի . ունէր երկու եղբայրներ՝ Կիրակոս եւ Սահակ, վերջինս մանուկ հասակին վախ-ճանաւ (1601էն յառաջ), եւ քոյրեր՝ Նիխա-բեթ եւ Շաղվարդ : Կը յիշէ եղբորորդի մ'ալ, անշուշտ Կիրակոսի զաւակը, Թարխան անուն, որ 1601ին «նորաբողոք» էր . 1617ին անիկա «տէր Թումայ» անուամբ կը ներկայանայ . հա-ւանորէն նոյն տէր Թուման է, որ 1626ին «Մարտիրոս արքեպիսկոպոս էջմիածնեցի, եղբորորդի տէր Աւետիս կաթողիկոսի»¹⁰ ա-նունը եւ տիտղոսը կը կրէ :

Աւետիս իւր բնակութիւնն ունէր էջմիա-ծին : Ընտրուած է կաթողիկոսակից հաւանո-րէն 1594ին, Առաքել կաթողիկոսի մահէն ետքը : 1601ին ուղեւորեցաւ Կ. Պոլիս եւ վե-րադարձաւ էջմիածին . հոս էր 1603ին : Ու՞ր էր արարատեան դաշտի բնակիչներու տեղա-հանութեան ժամանակ, չգիտենք : Երեւան էր

⁹ Ժամանակագրութիւն, էջ 612 :
¹⁰ Մարտիրոս արքեպիսկոպոս 1626ին ընկերացած էր Մելքիսեդեկ կաթողիկոսին, երբ անիկա արտասահ-ման կը փախչէր . նոյն տարուոյն Գեկտ. 29ին Մելքիսե-դեկի կոնդակին մէջ կը յիշուի ինքը իբրեւ վկայ Նի-կոզայոս արքեպիսկոպոսի ձեռնադրութեան ի Լվով . կոնդակին լատիներէն թարգմանութեան մէջ կ'ըսուի Rev. Martinus metropolitanus archiepiscopus Sanctae Ecimiazin, nepos Revissimi Avedic Patriarchae .

1605ին : 1613ին հրաւիրուեցաւ Երուսաղէմ ձեռնադրելու Գրեթոր Գանձակեցին Երու-սաղէմի արքեպիսկոպոս . ձեռնադրութիւնը տեղի ունեցաւ Ապրիլ 5ին : Մովսէս վարդա-պետ զինքը էջմիածին գիտէ 1615ին : Հաւա-նորէն քաղաքական եւ տնտեսական դժուարին պայմաններէն խոյս տալով 1620ին առանձնա-ցաւ Վրաստան եւ հոն ալ վախճանեցաւ 1622էն ոչ շատ ետքը (1623°) :

Ժամանակակիցները միաբան կը վկայեն Աւետիսի պարկեշտ վարքին մասին . իւր բա-րութեամբը, մեղմ բնաւորութեամբը Մելքի-սեդեկ կաթողիկոսի հակապատկերն էր : Ու-նէր որոշ չափով մտաւոր զարգացում . ըն-թերցասէր էր եւ գրասէր, ինչպէս իր օրինա-կած գրքերը ցոյց կու տան եւ կը վկայեն Գրե-թոր Գարանաղցի եւ Մովսէս վարդապետ : Ժողովուրդը կը սիրէր զինքը եւ Ամիրզունա-խան կը յարգէր իր անձը : Բայց չունէր վար-չական կարողութիւն, դժուարին պայմաննե-րու մէջ ժողովրդեան առաջնորդելու ոյժը : Անփառասէր էր, այս պատճառաւ չունեցաւ բախում ոչ Դաւիթ եւ ոչ Մելքիսեդեկ կա-թողիկոսներու հետ . քաղաքական իշխանու-թիւնն ալ չհալածեց զինքը : Թերեւս այս չե-զոք զիրքին համար ալ չարժանացաւ Առաքել Դաւրիթեցույ ուշադրութեան :

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



**ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՓԱՅԻ
ԱՌԵՋՆՈՐԳ Ս. ԱՆՏՈՆԻ ՎԵՆԵՑ Ի ԿԱՓԱ
ԵՒ ԵՐԵՍՓՈՒՆԵ ԿՈՍՏԱՆՊՈՒՆ ԿԵԹՈՂԻԿՈՍԻ
(1428—1448)**

Սարգիս վարդապետի անունը ծանօթ է Փլորենտեան ժողովի պատմութենէն : Իր կեանքի եւ գործունէութեան մասին անդրա-դոյն տեղեկութիւններ հաղորդած են 1428—1438 տարիներու մէջ ի Կաֆա գրուած ձեռա-դրական յիշատակարանները : Ինձ կը թուի թէ ձեռք բերուած այս տեղեկութիւններու վրայ յեցած կարող ենք իրեն վերագրել Քաջ Լիպարիտ իշխանի յիշատակին նուիրուած տաղ մը, որ հրապարակի վրայ անանուն կը շրջի :

1. Սարգիս վարդապետի կեանքը մինչեւ

1428 անյայտութեան մէջ թաղուած է : Առա-ջին անգամ կը յիշէ զինքը Քրիստոսոսուր ա-րեղայ 1428ին Աւետիք արեղայի խնդրանքով գրած Սաղտեորի յիշատակարանին մէջ, որ պահուած է Պարիսի Աղգային Մատենադա-րանի մէջ, Թ. 81 : Այս տեղ կը յայտնէ գրիչը, թէ օրինակութիւնը կատարուած է «ի յաշ-խարհս Հոնաց, ի մայրաքաղաքս ի Կաֆաս ընդ հովանեաւ ի յառ ոտն սրբոյն Անտոնի անա-պատականին . եւ յեպիսկոպոսութեան Տէր Յովսէփու Գաղատացոյ . եւ ի վարդապետու-թեան Սարգիս վարդապետի որ է առաջնորդ սուրբ ուխտիս եւ ուսուցիչ մեր» :

Նոյն միտքը կրկնուած է նոյն գրչի 1429ին Մարտիրոս արեղայի համար գրած Շարակ-նոցին մէջ, ի գլուխ ելած «յաշխարհս Հոնաց, ի վանս որ յանուն Ս. Անտոնի, առնթեր Կաֆի մեծ քաղաքին, առաջնորդութեամբ վա-նացս մեծի վարդապետի եւ քաջ բարունոյ տեսն Սարգիս . . .» (Պարիս, Աղգ. Մատ. , Թ. 69) :

Ո՞ր քաղաքէն եւ ե՞րբ եկաւ Սարգիս Ղրիմ եւ հաստատեց բնակութիւնը «առնթեր Կա-ֆայի» գտնուած Ս. Անտոն վանքին մէջ . դժբախտաբար լուծ են այս մասին ժամանա-կակիցները :

Կաֆայի Պատմութեան մէջ առաջին ան-գամ այս թուին կը պատահինք նաեւ Ս. Ան-տոն անապատականի անուամբ կառուցուած վանքին, որուն համար կ'ըսուի թէ հինաւուրց վանք եղած ըլլայ եւ ապա «աւեր եւ ամայա-ցեալ» վիճակի մատնուած . այնպէս որ «մու-րալով էին կերակուր բնակչաց սորա» :

Սարգիս վարդապետ եկած է Կաֆա հա-ւանորէն իբրեւ երեսփոխան Սոյ կաթողիկո-սին, ինչպէս իրեն տրուած «աթոռակալ» տիտ-ղոսէն կ'իմացուի եւ 1438ին յայտնապէս կը հաստատէ զայս Կոստանդին կաթողիկոս : Սկսեալ 1348էն կար ի Ղրիմ «հիւսիսային կող-մանց» արքեպիսկոպոսին առնթեր աթոռա-կալ մը, յանունէ Յովհաննէս Սեբաստացի (1348—1485), որ կ'երեւայ թէ նոյնպէս կա-թողիկոսական ներկայացուցիչ էր Գենուաց-ւոց քով : Անոր մահունէն ետքը մինչեւ 1428 աթոռակալ չի յիշուիր . կամ անհոգութեամբ յիշատակագիրներու, որոնց թիւը շատ նուազ է այս 40ամեայ շրջանին, եւ կամ Կաթողիկո-սարանի կողմէն նոյնպիսի մէկը նշանակուած չըլլալուն համար :

Սրբ հաստատուելով Կաֆա՝ իր գործու-նէութեան համար բնակավայր կ'ընտրէ Սար-

